

բազան Հօր կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, վասն հոգւոցն Սուլթանի, Կարինէի, եւ ծնողացն Կարապետի եւ Մարիի եւ Կիւրեղեան գերդաստանի հոգիներուն ի հանգիստ:

Կիրակի, 28 Մարտ.- Գ. Քառասնորդաց. Անառակին: Ժամերգութիւնները եւ Ս. Պատարագը մա-

տուցուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարան էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Պատրաստեց՝ ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Իմ մեղքերս կարելի է տասը մատներու վրայ հաշուել, սակայն մարդկութեան բոլոր մատները միասին առած՝ պիտի չբաւէին մեղքերդ համբելու:

Հաճոյքը կրնայ ցնորքներու վրայ հաստատուիլ, սակայն երջանկութիւնը անկասկած կը հանգչի ճշմարտութեան վրայ:

Թերեւս ամէն ճշմարտութիւն յարմար չէ ըսել, սակայն միշտ լաւ է զայն լսել:

Իրա՛ւ գեղեցկութիւնը Աստուծո՛մէ կու գայ եւ Անոր կը դառնայ:

Խաչը ապրուած Աւետարանն է, եւ Աւետարանը՝ քարոզուած խաչը:

Երջանկութիւնը նման է թաւալող գնդակին որուն ետեւէն կը վազենք, սակայն երբ կանգ առնէ՝ ոտքի հարուածով դարձեալ կը հեռուացնենք զայն:

Աստուածաբանութիւնը՝ Աստուծոյ խորհուրդն է դէպի մարդը խոնարհած, իսկ իմաստասիրութիւնը՝ մարդուն խորհուրդն է առ Աստուած բարձրացած:

Մարդ երջանիկ կ'ըլլայ միայն ուրիշները երջանկացնելով:

Սէրն է տիեզերքի ճարտարապետը:

Երբ բարի մարդ մը տեսնես, խորհէ՛ անոր նմանիլ, իսկ երբ տեսնես չար մարդ մը, դուն քու սիրտդ քննէ:

Զօրաւոր է ան, որ կրնայ յաղթել ինքզինքին:

Գոհ կը մնանք կեանքէն միայն՝ եթէ զայն լաւ օգտագործենք: